

իրենց իշխանութեան համար եւ ամէն խօսքերուն տակ
դաւաճանութիւն կը տեսնէին:

Իսկ թշնամուոյն դեմ գործելու մասին ոչ ոք իր ընկերոջ հետ միաբան
չէր, ոչ ոք չէր ուզեր իւր անձնական զինուորները իւր անձէն
հեռացնել, ոչ ոք իւր սահմաններէն հեռանալ: Ուստի ինչպէս
անօգուտ մտած էին ժողովքի, անօգուտ դուրս ելան, հեծան իրենց
ծիրերը, առին իրենց թիկնապահները, գնացին իւրաքանչիւր ոք իւր
ընկերոջ դաւաճանութենէն կասկածելով եւ ցրուեցան իրենց
գաւառները:

Բայց այդ բազմութեան մէջ, որ դահլիճին մէկ կողմը կեռած խօսքի
չէին խառնուէր՝ կային երիտասարդ իշխանագունք, որոնց
պարտականութիւն էր վուռ միայն կալ եւ յարգել իրենց հարց,
հորեղբարց կամ մեծ եղբարց ներկայութիւնը եւ լսել Սոցայ մէջ
ծանրագլուխ երիտասարդ մը կար նաեւ, որ ուշադրութեամբ ամէն
բան կը դիտէր եւ մտիկ կ'ընէր: Երբ ամէնքը ցրուեցան՝ մօտեցաւ
Սմբատ Սպարապետին:

— Դայր,— ըսաւ,— միթե՞ բաւական չեղաւ այդ սասնցուոյն պատիժը,
եթէ հրաման տաս արծակեմ զինքը, որ երթայ իւր ճամփան:

— Այո՛, շատ եւ շատ եղաւ, բայց ճշմարտութիւններն նաեւ ամէն տեղ
պետք չէ խօսիր Զօրեղբօրդ սիրական Յովնանն է գա:

— Կը ճանչեմ, հայր, երթամ ուրեմն:

Շուտ մը վար իջաւ Աշոտ եւ հրաման ըրաւ պահապանաց իրեն բերել
Յովնան. եւ առանձին սենեակի մը կը շրջագայէր, երբ սասնցին եկաւ
նոյնպէս անխռով ինչպէս բանտ գնացած ժամանակ անխռով էր:

— Յովնա՛ն եղբայր,— ըսաւ Աշոտ,— ինչ պետք կար այս իշխանաց
ժողովքին մէջ քու բոլոր կարծիքներդ յայտնէր մի թէ աւելի լաւ չէ՞ր
լռիկ մնջիկ գործել՝ պատրաստել ժողովուրդը եւ վտանգի օրն ու
ժամը հասնելուն գործի սկսիլ: